Ա. Պ. ՓՈՂԱԴՅԱՆ

ԻՍԼԱՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՔՐԴԵՐԻ ՄԵՋ VII—X ԴԴ.
(Ըստ արաբական միջնադարյան աղբյուրների)

Քրդերի մեջ իսլամի տարածումը քրդագիտության սակավ ուսումնասիրված բնագավառներից մեկն է։ Չնայած շատ քրդագետ հետազոտողներ՝ Ն. Մառը, Վ. Մինորսկին, Գ. Դրայվերը, Ս. Եղիազարովը, Վ. Նիկիտինը, Ամին Զաքին, Ռ. Յասիմին, Մ. Ռ. Հուայդին, ինչպես նաև ժամանակի Արևմուտքի և ցարական Ռուսաստանի ռազմաքաղաքական գործիչները իրենց աշխատություններում քիչ թե շատ անդրադարձել են իսլամին, սակայն մեզ հետաքրքրող հարցը համարյա տեղ չի գտել նրանց գործերում[1]։

Ներկա հոդվածում մեր նպատակն է արաբական միջնադարյան աղբյուրների հիման վրա ցույց տալ քրդերի մահմեդականացման (VII—X դդ.) սկզբնական փուլը։

Քրդերի նախաիսլամական հավատալիքների մասին մեր պատկերացումները տակավին աղոտ են, որովհետև գիտական շրջանառության մեջ դեռևս չկան համապատասխան գրավոր հին տվյալներ։

Քրդական միջավայրում պահպանված ծեսերի, այլևայլ վերապրուկների և մասնավորապես եզդիների հավատալիքների հիման վրա մի շարք հետազոտողներ հակված են զարգացնելու այն տեսակետը, թե մինչև մահմեդականությունը քրդերը դավանել են այն կրոնական գաղափարները, ինչ իրանական մյուս ժողովուրդները։ Դեռ ավելին. որոշ քրդագետներ հավատալիքների նույնությունը ներկայացնում են որպես քրդերի իրանական ծագման հիմք[2]։ Հարցի նմանօրինակ լուսաբանումը, անկասկած, զուրկ է գիտական լրջախոհությունից այն ակնհայտ պատճառով, որ հավատալիքների ընդհանրությունները բնավ չեն կարող հանդիսանալ էթնիկական ընդհանրության հիմք։

Եթե ընդունենք, որ քրդերի նախաիսլամական կրոնը զրադաշտականությունն էր, ինչպես գտնում են որոշ հետազոտողներ[3], ապա հայտնի

չէ, թե այն երբ է ներթափանցել քրդական իրականության մեջ և ինչ պայմաններում։

Աքեմենյան շրջանում, մարական մոգերի ակտիվ մասնակցությամբ, զրադաշտականությունը Արևելքից սկսեց հետզհետե տարածվել Իրանի արևմտյան նահանգները, ուր Սասանյան դինաստիայի օրոք քրիստոնեության և մանիքեականության դեմ ծավալված պայքարում, այն վերջնականապես վերածվեց պետական կրոնի[4]։

Քրդերի մեջ նույնպես տարածված է այն կարծիքը, որ իրենց նախնիները մինչև իսլամի երևան գալը եղել են զրադաշտականներ—մաջուս[5]։ Մինչդեռ, ինչպես ընդգծում է Վ. Մինորսկին, արամեա-քրիստոնեական աղբյուրները հիշատակում են, որ այն քրդերը, որոնք ընդունեցին քրիստոնեությունը (III դ.), նախկինում եղել են հեթանոսներ[6]։ Այս առթիվ տեղին է նշել, որ արաբ պատմիչներ աթ-Թաբարին (X դ.), Իբն ալ-Ասիրը (XIII դ.) և ուրիշներ, նկարագրելով VII դ. 40-ական թթ. արաբների կողմից Իրանի Ֆարս նահանգի նվաճումը, միաժամանակ հիշատակում են հեթանոս քրդերին «ալ-աքրադ, ալ-մուշրիկին»[7]։

Քրդերի միջնադարյան հավատալիքների մասին սակավ, բայց արժեքավոր տեղեկություններ են պարունակում արաբական աղբյուրները։ Խոսքը վերաբերում է ոչ միայն իսլամին, այլև զրադաշտական և քրիստոնեական գաղափարներին, որոնք, պետք է ենթադրել, որ քրդական իրականության մեջ գոյություն են ունեցել իսլամից առաջ, այլ ոչ թե ներթափանցել են վերջինիս տարածման ժամանակներում։

Նախ մի քանի խոսք զրադաշտականության մասին։ IX—X դդ. արաբ հեղինակների երկերում ցայտուն երևում է X դ. զրադաշտականության մեծ դերն ու տեղը իրանական ժողովուրդների կյանքում։ Իբն Հաուկալի (X դ.) վկայությամբ Իրանի Ֆարս նահանգի բոլոր ռուստակներում (շրջաններում) IX—X դդ. գոյություն ունեին անթիվ «կրակատներ»[8]։

Ֆարսի կրակատներից էր Գարյանը, որը գտնվում էր քրդաբնակ շրջանում և ամենախոշորն էր ամբողջ Իրանում։ Իբն Հաուկալի խոսքերով՝ այն հայտնի էր Նար-ճավի կամ Ադրճավի[9] անունով։ (Մեր կարծիքով Նար ճավի նույնն է, ինչ Ադրճավի։ Նար արաբական բառ է, նշանակում է կրակ, որը միջին պարսկերեն ադրի-ի (կրակ) թարգմանությունն է։ Իսկ ճավի նույնպես իրանական բառ է, որը նշանակում է աղբյուր, աչք, հետևաբար թարգմանաբար կլինի հրակն, կրակի աղբյուր)։ Այս կարգի վկայակոչումների հանդիպում ենք ալ-Իսթախրիի[10] (X դ.), ալ-Մուկադդասիի[11] (X դ.), Իբն ալ-Ֆակիհի[12] (IX—X դդ.), ալ-Իդրիսիի[13] (XII դ.) և այլոց երկերում։ Ալ-Մուկադդասին նշում է, որ «Գարյանը փոքրիկ

քաղաք է, բայց ուստակը չէն է, նրանում կրակատաճար կա, որը մեծարում են և նրանից ամենուր կրակ են տեղափոխում»[14]։ Սույն կրակատան վերաբերյալ Իբն ալ-Ֆակիհի մոտ հետաքրքիր լեգենդ է պահպանվել, ըստ որի այն սրբավայր էր դարձել դեռևս Խ. Անուշիրվանի կողմից (VI դ.), որի կրակը տեղափոխվել էր Խորեզմից[15]։ Արաբական տիրապետության ժամանակ մոգերը այդ կրակատունը բաժանեցին երկու մասի, մեկը տեղափոխեցին Ֆեսա, իսկ մյուսը թողեցին տեղում[16]։

Ըստ արաբ աշխարհագիրների, իրանական Ֆարս նահանգը ուներ 5 գավառ, որոնց կազմի մեջ էին մտնում արաբական աղբյուրներում երկու ուղղագրությամբ հիշատակվող زم զում (հոգ. թիվ زموم զումում), ռում رم (հոգ. թիվ رموم ռումում) քրդական հինգ բնակավայրեր[17]։ Դրանցից մեկն էլ Քերմանին սահմանակից Գարյան բնակավայրն էր, որը արաբ հեղինակները մտցնում են Ֆարս նահանգի Արտաշիրխուրա գավառի մեջ[18]։ Միջնադարյան արաբական աղբյուրները (IX—X դդ.), որոնք քրդերին հիշատակում են, գլխավորապես, Ֆարսում Ջիբալում[19], Մոսուլի մարզում և այլուր, մերթընդմերթ խոսում են, սույն տարածքներում գործող կրակատների մասին[20]։ Ուշագրավ է, որ X դ. հեղինակ ալ-Մասուդին իր աշխատություններից մեկում անդրադառնալով մի շարք ժողովուրդների, այդ թվում քրդերի նախաիսլամական կրոնին, գրում է, որ «...նրանցից շատերը կրակ էին պաշտում»[21]։

Տարաբախտաբար եղած կցկտուր վկայությունները հնարավորություն չեն տալիս ամբողջական պատկերացում կազմել քրդերի նախաիսլամական պաշտամունքի մասին, հիմք չեն տալիս եզրակացնելու, թե քուրդ ազգաբնակչությունը դավանել է զրադաշտականությունը։

Կարծիք կա, որ նախաիսլամական շրջանում և նրա տարածման ժամանակաշրջանում քրդերի մեջ տարածված կրոններից է եղել քրիստոնեությունը։ Այս տեսակետը զարգացնում են մի շարք քրդագետներ՝ Վ. Մինորսկին, Գ. Դրայվերը, Ա. Ջաբին և ուրիշներ[22]։ Իրաքցի գիտնական Շ. Խասբաքը իր հերթին գտնում է (թեև առանց փաստական տվյալների), թե ժամանակակից Քուրդիստանի քրիստոնեական տարրը բաղկացած է եղել հայերից և նեստորական ասորիներից։ Նրա կարծիքով, քրդերը դավանել են զրադաշտականություն, որից հետո ընդունել իսլամը[23]։ Շ. Խասբաքի այս տեսակետը հերքում են արաբական աղբյուրների նյութերը։

Նախ պետք է նշել, որ արաբական արշավանքներից առաջ քրիստոնեությունը լայն տարածում էր գտել Մերձավոր և Միջին Արևելքի շատ

ժողովուրդների մեջ, այդ թվում բուն Արաբիայում։ Եվ պատահական չէր, որ IV դարի արշալույսին այն որպես պաշտոնական կրոն ճանաչվեց Հայաստանում, հետագայում՝ Հռոմեական կայսրությունում և այլուր։ Արաբ հեղինակների նյութերից երևում է, որ Իրաքում[24], Ջիբալում[25] և իրանական մյուս շրջաններում[26] Աբբասյան խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանում դեռևս շարունակում էին գոյատևել ինչպես քրիստոնեությունը, այնպես էլ հուդայական կրոնը։

X դ. արաբ խոշոր գիտնական ալ-Մասուդին, խոսելով քրդական ցեղերի մասին, գրում է, որ «ալ-յակուբիյա և ալ-ջուրկան (քրդական ցեղեր—Ա. Փ.) քրիստոնյա են, որոնց բնակավայրերը գտնվում են Մոսուլի և Ջաբալ ալ-Ջուդիի[27] միջև ընկած տարածքում»[28]։ Ալ-Մասուդին ցույց չի տալիս նշված ցեղերի քրիստոնեություն ընդունելու ժամանակը։ Այս հարցը ընդհանրապես վրիպել է հեղինակների ուշադրությունից։ Կարելի է ենթադրել, որ մինչ մահմեդականության տարածումը՝ քրդերի մեջ քրիստոնեական դավանանքը առկա է եղել։

Քննարկվող հարցի առնչությամբ ուշագրավ է ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի արաբական ձեռագրաֆոնդի № 782 ձեռագիրը, ուր նշվում է, որ «քրդերի մեջ կան քրիստոնեություն դավանողներ։ Ըստ երևույթին այդ եղել է վաղ անցյալում, որից հետո նրանց մեջ տարածվեց իսլամը»[29]։

Քրդերի մեջ քրիստոնեության գոյության վերաբերյալ կցկտուր տեղեկություններ են հաղորդում նաև այլ հեղինակներ[30]։ Սակայն առանձնահատուկ ուշադրության են արժանի Քուրդիստանում քրիստոնեական եկեղեցիների վերաբերյալ նյութերը։ X դ. հեղինակ աշ-Շաբուշթիի տվյալներով Մոսուլի մարզում[31] կային մի քանի եկեղեցիներ, ճիշտ այն շրջաններում, որտեղ ալ-Մասուդին հիշատակում է քրիստոնյա քրդական ցեղերին։ Նման կարգի տեղեկություններ իր աշխատությունում հաղորդում է նաև Յակութը։ Օրինակ, խոսելով Դեր Կում եկեղեցու մասին, նա նշում է, որ այն գտնվում է «Հաքքարիյա երկրում՝ Իմադիայի մոտակայքում... որը կրում է Կում գյուղի անունը և շեն է մինչև օրս»[32]։

Արաբ հեղինակների տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ արաբական արշավանքների և իսլամի տարածման արշալույսին քուրդ ազգաբնակչության հավատալիքները բազմատեսակ էին։ Քրդական իրականության մեջ, ինչպես նշվեց, գոյություն ուներ ոչ միայն հեթանոսությունը, այլև զրադաշտականությունը, քրիստոնեությունը և այլն, որոնք հետզհետե իրենց տեղը զիջեցին իսլամին։

Քրդերի մեջ իսլամի տարածումը իր բնույթով բարդ է։ Նախ և առաջ տարածում ասելով չպետք է հասկանալ ընդունում։ Կարելի է որոշակիորեն ցույց տալ կրոնական այդ գաղափարախոսության ներթափանցման ակունքները, բայց սուսյգ հնարավոր չէ նշել նրա՝ պաշտոնական կրոնի վերածվելը, քանի որ այդ պրոցեսը (այսինքն՝ մահմեդականացումը) տևեց մի քանի հարյուրամյակ և թերևս շարունակվում է։ Մեր ընտրած ժամանակաշրջանը համարվում է քրդերի մեջ իսլամի տարածման և ընդունման առաջին փուլը։

Իսլամի երևան գալը, ինչպես նաև նրա գաղափարական յուրահատուկ գծերը պայմանավորված էին Արաբիայի ժողովուրդների զարգացման առանձնահատկություններով[33]։

VII դարի սկզբին կրոնական և սոցիալական գաղափարները, որ քարոզեց Մուհամեդը, ծառայեցին հասարակարգի փոփոխությանը։ Մուհամեդը դարձավ արաբների մարգարեն, նա կարողացավ իր ետևից տանել արաբական թերակղզու բնակչությանը՝ պահպանելով և օգտագործելով այն, ինչ կարելի էր վերցնել տեղական ավանդույթներից[34]։

Գլխավորելով կրոնաքաղաքական և ռազմական շարժումը սկզբում Մեքքայում, այնուհետև Մեդինայում (Յասրիբում), Մուհամեդը հիմնադրեց նոր ուսմունք՝ իսլամը, որի հիմնական սկզբունքը՝ «իսլամում բոլորի եղբայրությունն ու հավասարությունն» էր։ Վերոհիշյալ սկզբունքի տարածման հետևանքով 610—632 թթ. ընթացքում Մուհամեդը որպես աստծո ռասուլը (առաքյալը), կարողացավ իր շուրջը համախմբել Արաբիայի բնակչության զգալի մասին։

Նրա հանկարծակի մահից հետո՝ 632 թ. կազմվեց արաբական խալիֆայությունը (խալիֆա—փոխարինող, հաջորդող)։ Առաջին չորս խալիֆաները՝ Աբու Բաքրը (632—634 թթ.), Օմար իբն Խաթթաբը (634—644 թթ.), Օսման իբն Աֆֆանը (644—656 թթ.) և Ալի իբն Աբու Թալիբը (656—660) համարվում էին ռաշիդին՝ արդարադատ, արդարամիտ։ Եվ ահա, որքան էլ տարօրինակ թվա, այս «արդարադատ» խալիֆաների օրոք սկսվեց արաբական ռազմական էքսպանսիան Արաբիայի սահմաններից դուրս, որին մասնակցեցին անգամ Մուհամեդի հակառակորդ խոշոր ցեղերը։

Այսպիսով, սկզբնապես իսլամը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Արաբիայի ազնվականության սոցիալ-քաղաքական գաղափարախոսությունը, որը հենց նվաճումների ընթացքում վերջնականորեն ձևավորվեց որպես կրոն։

Արդարև, այս տեսակետից էլ մենք կտրականապես չենք կարող համաձայնել XX դ. քուրդ պատմաբան Ամին Զաքիի հետ, որը գտնում է, թե քրդերի մահմեդականացումը սկսվել է դեռևս մարգարեի օրոք[35]։

Ա. Զաքին հիմնվելով Մուհամեդ ալ-Ալուսիի «Թաֆսիր ռուհ էլ-մաանի» աշխատության տվյալների վրա, որն իր հերթին վկայակոչել է XIV—XV դդ. արաբ հեղինակ Իբն Հաջար ալ-Ասկալանիի «Ալ-իսաբա ֆի թամյիզ աս-սահաբա» երկի նյութերը, գրում է, որ Մուհամեդի զինակիցների մեջ եղել են նաև քրդեր։ Այս առիթով նա հիշատակում է ոմն Զաբան կամ Դաբան Աբու Մայմուն ալ-Քուրդիին և նրա որդուն՝ Մայմուն Աբու Նասիրին[36]։

Մեզ չհաջողվեց ձեռք բերել Մ. ալ-Ալուսիի աշխատությունը, բայց գտնվեց նրա սկզբնաղբյուրը՝ Իբն Հաջարի երկը։ Կալկաթայի հրատարակության առաջին հատորում հեղինակը իսկապես խոսում է նման անձնավորության մասին, բայց ոչ թե ալ-Քուրդի ազգանունով, այլ ալ-Սուրդի[37]։

Իբն Հաջարը իր մեկ ուրիշ՝ «Թահզիբ—ու—թահզիբ» աշխատությունում հիշատակում է Մայմուն Աբու Նասիր կամ Մայմուն Աբու Բասիր նույն անձնավորությանը, բայց այս անգամ ալ-Քուրդի ազգանունով[38]։

Հայտնի է, որ Իբն Հաջարը ուշ շրջանի հեղինակ է և բավականին օգտվել է Իբն ալ-Ասիրի (XIII դ.) «Ուսուդ-էլ-ղաբա ֆի մաարիֆաթ աս-սահաբա» նույնատիպ աշխատությունից։ Վերջինս դարձյալ խոսում է ոմն Զաբան Աբու Մայմունի մասին, բայց ընդհանրապես չի հիշատակում ազգանունը[39]։

Հայտնի չէ, թե Իբն Հաջարը ալ-Քուրդի կամ ալ-Սուրդի ազգանունը որտեղից է վերցրել։ Բացի այդ, հայտնի չէ նաև թե ալ-Ալուսին Իբն Հաջարի որ հրատարակությունից է օգտվել, հնարավոր է վրիպում տեքստում, որի պատճառով էլ ազգանունները վիճելի են մնում։ Այնուամենայնիվ, մեր կասկածները փարատում են թե՛ Իբն Հաջարի և թե՛ Իբն ալ-Ասիրի վկայակոչությունները, որոնք խոսում են Զաբան ալ-Քուրդիի կամ ալ-Սուրդիի ոչ թե մարգարեի զինակից լինելու մասին, այլ այն մասին, որ նա իբր շուրջ 10 անգամ լսել է Մուհամեդի քարոզները[40]։

Այնուհանդերձ, Ա. Զաքին, չմատնանշելով սկզբնաղբյուրները, շարունակում է անհիմն պնդել, թե իբր Մուհամեդի զինակիցների մեջ եղել են քրդական ծագումով ուրիշ մարդիկ[41]։

Տարաբախտաբար, այս թյուր տեսակետները տեղ են գտել նաև քրդագիտական գրականության[42] և ժամանակակից մահմեդական քրդերի մեջ։

Այս առթիվ արժե ընդգծել, որ միջնադարյան արաբական աղբյուրներում որևէ նյութի չենք հանդիպում՝ իսլամի երևան գալու ժամանակաշրջանում Արաբական թերակղզում քրդերի առկայության մասին։ Քրդերի արտագաղթը հայրենի լեռնաշխարհից սկիզբ առավ արաբական նվաճումներից հետո։ Ընդսմին, կարող է պատահել, որ VII դ. սկզբին դեպի այս տարածքը սասանյան զորքի կատարած արշավանքների ժամանակ առանձին քուրդ զինվորներ ծառայության անցան արաբ ցեղապետերի մոտ։ Հետևաբար, եթե անգամ ենթադրենք, որ Մուհամեդի իսլամական համայնքում կային քրդեր, ապա դա դեռ չի նշանակում, որ նրանք մեր պատկերացրած մուսուլմաններն էին։ Հայտնի է, որ իսլամի համայնքի ազդեցությունը մեծացնելու և գործունեությունը ակտիվացնելու նպատակով Մուհամեդի կողմնակիցները Մեքքայի մեծահարուստներից նույնիսկ ստրուկներ էին գնում։ Օրինակ, առաջին խալիֆան՝ Աբու Բաքրը, մարգարեի առաքելության սկզբնական շրջանում իր 40 հազար դիրհեմ կարողությունից շուրջ 35 հազարը տրամադրեց կրոնական կարիքներին, ինչպես նաև ստրուկներ գնելուն[43]։

Քրդերի մեջ իսլամի տարածումը և մահմեդականացումը, ըստ մեր ունեցած տվյալների, սկսվեց արաբական նվաճումներից հետո, որոնք և ճակատագրական դեր խաղացին ոչ միայն քրդերի, այլև երկրագնդի տարբեր մայրցամաքների տասնյակ ժողովուրդների կյանքում։

Արաբական նվաճումները տարբեր ճակատներում սկսվեցին միաժամանակ։ Դրանք լայն մասշտաբներ ընդունեցին հատկապես երկրորդ խալիֆայի՝ Օմարի օրոք։ Իսլամի դրոշի ներքո ձեռնարկված ռազմական հարձակումների ընթացքում 633—642 թթ. արաբները նվաճեցին Պաղեստինը, Սիրիան, Վերին Միջագետքը, Եգիպտոսը և այլն։

633 թ. Հիրա քաղաքի մոտ (Իրաքում) իրանական զորքը պարտություն կրեց արաբներից։ Իր մայրամուտն ապրող Սասանյան դինաստիան, որը ի վիճակի չէր հակահարված տալու նույնիսկ երկրի կենտրոնախույս ուժերին, չկարողացավ մոբիլիզացնել երկրի ռազմական ողջ ուժերը և կանխել արաբների աննախընթաց առաջխաղացումը։ 637 թ. սկզբներին Կադիսիայի ճակատամարտում արաբների խոշոր հաղթանակը դարձավ շրջադարձային կետ Իրանում ռազմական նվաճումները շարունակելու գործում։ Մի քանի շաբաթից արաբները ներխուժեցին Սասանյան մայրաքաղաք Տիզբոնը։ Մինչ այդ Հազկերտ 3-րդը թողեց քաղաքը և մեկնեց Հուլվան։ Հետապնդելով Հազկերտ 3-րդին, արաբները խորացրին իրենց նվաճումները իրանական տիրույթներում։

Պետք է ենթադրել, որ քուրդ-արաբական բախումները այս շրջանում տեղի ունեցան 637—638 թթ., երբ արաբները հարձակվեցին Ջազիրայի[44] (Վերին Միջագետք), Հուլվանի, Կարմասինի (Քերմանշահ) և այլ շրջանների վրա[45]։

640 թ. Ութբա իբն Ֆարկադի գլխավորությամբ արաբական զորքը գրավեց Թիքրիթը, Մոսուլը և, ալ-Բալազուրիի (IX դ.) խոսքերով, «քրդական բոլոր ամրությունները»[46]։ Հետագա երկու տարիների ընթացքում արաբները խորացան Ջիբալում։ 641 թ. Ազրա իբն Կայսի գլխավորած զորքը Հուլվանից շարժվեց դեպի Շահրիզուր։ Տեղի բնակչության անսասան դիմադրության հետևանքով, արաբական զորքը ետ նահանջեց։ Այնուհետև Ութբա իբն Ֆարկադը կրկին փորձեց գրավել Շահրիզուրը։ Ալ-Բալազուրին գրում է, թե նա նվաճեց այդ մարզը, «կռվեց քրդերի դեմ, ջարդեց նրանց և Օմարին հայտնեց, որ նվաճումներ կատարելով հասել է մինչև Ատրպատական»[47]։

Այս կապակցությամբ Իբն Խալդունը նշում է, թե Ութբա իբն Ֆարկադը նվաճեց Շահրիզուրը և Սամաղանը, բնակչության վրա նշանակեց ջիզյա և խարաջ[48]։

Յակութը Շահրիզուրի մասին խոսելիս նշում է, որ այն «մեծ մարզ է, գտնվում է Ջիբալում և տարածված է Էրբիլի ու Համադանի միջև... Այս շրջանի բնակիչները բոլորն էլ քրդեր են»[49]։ Իսկ Աբու Դուլաֆը (X դ.) գրում է, որ Շահրիզուրի քուրդ բնակչությունը բավականաչափ անհնազանդ էր և չէր ենթարկվում տեղի կառավարիչներին[50]։

Արաբ աշխարհագիրները և պատմագիրները խոսելով Իրաքի, Ջիբալի, Իրանի և այլ վայրերի նվաճման մասին, հաճախ գործածում են աջամ, մաջուս, կամ աղու (թշնամի) տերմինները, որոնք բարդացնում են մեր խնդիրը՝ առանձնացնելու քրդերին այդ տեղանքի բնակիչներից։ Նրանց վկայակոչումներից մի բան պարզ է, որ արաբները լեռնային այդ բնակավայրերը գրավեցին հսկայական դժվարությամբ։ Անտարակույս, դա պետք է բացատրել ոչ միայն աշխարհագրական դժվարին պայմաններով, այլև տեղի բնակչության համառ դիմադրությամբ։

641 թ. Նեհավենդի ճակատամարտը սասանյանների վերջին հույսն էր։ Այստեղ հակառակորդները մեծ ուժեր էին կուտակել, որի նկարագրությունը զգալի տեղ է զբաղեցրել արաբական աղբյուրներում։ Արաբների տարած հաղթանակը լուրջ բեկում առաջացրեց արևելյան ճակատում։ Հաղկերտ 3-րդը հարկադրված դիմեց փախուստի, անցավ Մերով, ուր վախճանվեց 651 թ.։

Նկարագրելով Իրանի նվաճումը, արաբ հեղինակները մերթ ընդ

մերթ հիշատակում են նաև քրդերին[51]։ Այսպես՝ 643 թ. Ֆեսայի և Դարաբջրդի գրավման ժամանակ, ինչպես նշում է աթ-Թաբարին, Ֆարսի քրդերը դիմադրեցին արաբներին[52]։ Նույն՝ 643 թ. Բիրոզում (Ահվազի շրջ.) «հեթանոս քրդերը» համառ դիմադրությունից հետո հրաժարվեցին իսլամից, ինչպես նաև ջիզյայից և խարաջից։ Արաբները նրանց ջարդեցին և գերեվարեցին[53]։

645 թ. Սալման իբն Ռաբիան գրավեց Առանը (Աղվանք)։ Ըստ արաբ հեղինակների տվյալների, նրա զորահրամանատարը քրդական Բալասջան (Բաղասական) ցեղին կոչ արեց ընդունել իսլամը[54], ինչպես սովորաբար անում էին նվաճողները։ Ալ-Բալազուրին գրում է, որ «քրդերը կռվեցին նրա հետ, բայց նա (Սալման իբն Ռաբիան—Ա. Փ.) հաղթեց նրանց, որոնցից մի մասին պարտադրեց (վճարել) ջիզյա, մի մասն էլ վճարեց սադակա (իսլամական հարկատեսակ), բայց այդպիսիները քիչ էին»[55]։

Մոտավորապես այսպիսի պատկեր ուներ քրդերի մեջ իսլամի տարածման առաջին շրջանը։ Կրոնական նոր գաղափարախոսության ներթափանցման վրա լույս են սփռում այդ ժամանակ կիրառվող հարկատեսակները՝ ջիզյա (գլխահարկ) և խարաջ (հողահարկ)։

Իրանական այս երկու հարկատեսակներն էլ (գեզիտ-ջիզյա և խարագ-խարաջ) արաբները իրենց արշավանքների սկզբնական շրջանում փոխառան սասանյաններից[56]։ Խալիֆայության հարկային սիստեմը որոշակի ձևավորվեց հիմնականում ֆեոդալական հարաբերությունների զարգացման ընթացքում։

Ակնհայտ է, որ ջիզյան (գլխահարկ) վճարում էին նրանք, ովքեր հրաժարվում էին իսլամ ընդունելուց, իսկ խարաջը պարտադիր հողային հարկ էր, որի չափը փոխվում էր մշակվող կուլտուրայի համեմատ։

Նվաճված երկրները, այդ թվում քրդական շրջանները, մասնավորապես Օմար խալիֆայի օրոք, գերազանցապես վճարում էին ջիզյա և խարաջ[57]։

Այս երկու ծանր հարկատեսակների կիրառմամբ, որ կատարվում էր իսլամից հրաժարվելու և դիմադրելու դեպքում, արաբները քաղաքական և տնտեսական ճնշում էին գործադրում նվաճված երկրների ժողովուրդների վրա։ Ջիզյայից ազատվելու համար, որը գանձվում էր ըստ նվաճողների պահանջի[58], իսլամը երբեմն ընդունվում էր լոկ ձևականորեն, այնպես, ինչպես քրդերը արեցին Առանում (Աղվանքում)։ Այս առթիվ հարկ է նշել, որ կրոնական գաղափարախոսությունների տարածումը, ինչպես ցույց է տալիս պատմությունը, պահանջում է երկար ժամանակ։

Որպես այդպիսին քրդերի կողմից մահմեդականության ընդունումը կամ մահմեդականացումը եղել է տևական ու բարդ պրոցես։

Այսպիսով, ինչպես երևում է վերը շարադրվածից, սկզբնական շրջանում իսլամի գաղափարները քրդերի մեջ տարածվել են դանդաղ՝ հիմնականում բռնությամբ։ Այդ պրոցեսի ընթացքը և մանրամասնությունները գրեթե լուսաբանված չեն։ Միայն հայտնի են կցկտուր տեղեկություններ[59]։ Այնուհանդերձ հիմնվելով խալիֆայության հարկային քաղաքականությանը վերաբերող նյութերի վրա, կարելի է եզրակացնել, որ քրդերը իսլամը սկսեցին ընդունել IX—X դդ.։ Օրինակ, ալ-Իսթախրին (X դ.) վկայակոչում է, որ Ֆարս նահանգի քրդական բնակավայրերից խալիֆայությանը տրվող խարաջը ապահովում էին քուրդ առաջնորդները[60]։ Ալ-Իսթախրիի վկայակոչությունն ուշագրավ է այն առումով, որ քրդական բնակավայրի պատասխանատու անձը քուրդ ցեղապետն էր, որը միաժամանակ խալիֆայության կողմից նշանակված կառավարիչն էր։

Անդրադառնալով Ջիբալի, Մոսուլի և այլ շրջանների հարկերին, արաբ հեղինակները միշտ չէ, որ հիշատակում են քրդերին։ Նրանց տրվյալներից երևում է, որ IX—X դդ. նշված տարածքներից գանձվում էր միայն խարաջը[61]։

Ինչպես նշվեց վերևում, այս ժամանակահատվածում (IX—X դդ.) իրանական ժողովուրդների մեջ դեռևս պահպանվում էր զրադաշտականությունը, որի դավանողների վճարած հարկերի մասին (ջիզյայի) համարյա լռում են արաբական աղբյուրները։

Ակնհայտ է, որ քրդերը մասնակցել են Ալիի օրոք ծագած խարիջիների շարժմանը։ Պետք է նշել, որ իսլամական աղանդները սկիզբ առան երրորդ խալիֆայի՝ Օսմանի (644—656) ժամանակ։ Մահմեդական համայնքի դժգոհության հիմնական պատճառն այն էր, որ վարչական բոլոր պաշտոնները զբաղեցրած Օսմանի մեծահարուստ բարեկամները (Օմայան տոհմից) մտահոգված էին հարստություն կուտակելով՝ ի հաշիվ խալիֆայության գանձարանի[62]։

Սոցիալ-տնտեսական ու քաղաքական բևեռացման պրոցեսի խորացումը առիթ տվեց լուրջ հուզումների՝ ստորին խավերի մեջ։ Ահա այս շրջանում էր, որ ձևավորվեց հայտնի շիական ուղղությունը (Ալիի խումբը, կուսակիցները, համախոհները), որի կրոնական ուսմունքի հիմնադիրն էր Աբդալահ իբն Սաբան[63]։ Նախնական շրջանում շիաները արտահայտում էին ստորին խավի շահերը և հետապնդում էին քաղա-

քական նպատակներ՝ պահանջելով մահմեդականների հավասարություն և խոշոր ազնվականության իշխանության վերացում։ Նրանք գտնում էին, որ օրինական խալիֆան (իմամ) կարող է լինել միայն մարգարեի ազգակիցը, արյունակիցը։ Հետևաբար, Ալին հանդիսանում էր օրինական հավակնորդը, որը երեք անգամ զրկվել էր այդ հնարավորությունից[64]։

Օսմանի սպանությունից հետո, որը կազմակերպել էին շիաները, խալիֆա հռչակվեց Ալին (656—660)։ Այդ ամենին թշնամաբար տրամադրվեց Օմայան վերնախավը, Սիրիայի կառավարիչ Մուավյա իբն Սուֆյանի գլխավորությամբ, որը ամեն կերպ ջանում էր ասպարեզից վերացնել Ալիին։ 657 թ. Սիֆինի մոտ Մուավյայի զորքը պարտություն կրեց Ալիի կողմնակիցներից։ Ճակատամարտի հաջորդ օրը, Մուավյայի զինվորները ղուրանով մարտադաշտ դուրս եկան՝ «աստծո գրքի դատաստանին»։ Այդ պահին Ալին դադարեցրեց մարտը և սկսեց բանակցություն վարել Մուավյայի հետ։ Ալիի այս վարմունքը նրա կողմնակիցները գընահատեցին որպես քայլ «աստծո դատաստանի դեմ»[65]։ Այդ պատճառով էլ լուծարքի ենթարկվեց նրա կողմնակիցների բանակը և շատերը համախմբվեցին ու այս անգամ հանդես եկան ոչ միայն Մուավյայի, այլև Ալիի դեմ[66]։ Դրանով պատմության թատերաբեմում ի հայտ եկավ խարիջիների հոսանքը (աղանդը, արաբական «խարաջա» բառից, որը նշանակում է դուրս գալ, ապստամբել), որը տևեց երկար ու ձիգ դարեր։ Արտաքնապես թվում էր, որ խարիջիների շարժումը ուղղված էր օմայանների դեմ, սակայն շուտով այդ շարժումն ընդլայնվեց և շահերի միասնության բերումով նրան սկսեցին հարել ու մասնակցել թե՛ մահմեդական և թե՛ ոչ մահմեդական շահագործվողներ։ Խարիջիները օրինական խալիֆաներ համարեցին միայն Աբու Բաքրին, Օմարին, իսկ Ալիին կիսով չափ՝ մինչև Մուավյայի հետ ունեցած վեճը։ Նրանք իսլամի քողի տակ մշակեցին ռազմաքաղաքական ծրագրեր[67] և սկսեցին պայքարել խոշոր հողատեր դասի դեմ։ Պատահական չէ, որ այդ շարժումը լայն արձագանք և տարածում գտավ խալիֆայության բոլոր տիրույթներում. նրան մասնակցեցին հակաարաբական տրամադրություն ունեցող գրեթե բոլոր տարրերը։

Խարիջիների գաղափարները քրդերի մեջ, բացառված չէ, որ սկսել են տարածվել դեռևս այդ շարժման սկզբնական շրջանում (VII դ. 60-ական թթ.)։ Օրինակ՝ ալ-Յակուբին նշում է, որ 660 թ. Շահրիզուրում հաստատվեց խարիջիների մի զորախումբ Ֆարուա իբն ալ-Աշջաիի գլխավորությամբ[68]։ Թեև հեղինակը այստեղ քրդերին չի հիշատակում,

բայց Իբն Հաուկալը, որը ընդգծում է այդ տեղանքում (Շահրիզուրի շրջան) քրդերի գերակշռության փաստերը և բնակչության խարիջի լինելը, հիմք է ծառայում պնդելու մեր ենթադրությունը։ Դեռ ավելին, ալ-Մասուդիի տվյալներից երևում է, որ VII դարի վերջերին խարիջիների շարժման օջախներից էին, Սինջարը և Մոսուլը[69]։

Խարիջիների շարժմանը IX դարից քրդերի ունեցած մասնակցության վերաբերյալ նյութեր են հաղորդում աթ-Թաբարին, Իբն ալ-Ասիրը և ուրիշներ[70]։ Ուշագրավ է այս առթիվ մեջ բերել դարձյալ ալ-Մասուդիի խիստ արժեքավոր վկայությունը։ Նա մասնավորապես շեշտում է, որ քրդերի մեջ տարածված գաղափարները ճիշտ այնպիսին էին, «ինչպիսին խարիջիներինը, որոնք ժխտում են Օսմանին և Ալիին»[71]։

Ինչպես վկայում է նույն ալ-Մասուդին, «Ատրպատական երկրում բնակվող քրդերը հայտնի են որպես շուրահ (այսինքն՝ խարիջի—Ա. Փ.)»[72]։ Նույն միտքը հաստատում է Իբն Խալդունը, որը նշում է, որ «քրդերը խարիջիների կողմնակիցներ էին»[73]։ Քրդերի խարիջիամետ լինելու վերաբերյալ կարելի է բերել ուրիշ փաստարկներ ևս։ Բնականաբար հարց է ծագում, թե խարիջիների գաղափարախոսությունը ինչո՞ւ այդքան արագորեն ներթափանցեց քրդական միջավայր և ունեցավ այդքան շատ համախոհներ։ Առաջադրված հարցին պատասխան տալու համար հարկ է ուշադրություն դարձնել խարիջիների գաղափարախոսության սկզբունքներին։ Իսլամական այդ աղանդավորական շարժման ծրագրերը մեծապես արտահայտում էին խալիֆայության ժողովուրդների ստորին խավերի շահերը[74]։

Սակայն իրենց կրոնական մոլեռանդության պատճառով խարիջիները հետագայում հեղինակազրկվեցին, և նրանց դեմ պայքարի ելան ոչ միայն խալիֆայության իշխանությունները, այլև մահմեդական բնակչությունը[75]։

Ինչպես դժվար չէ նկատել, քրդերի խարիջի լինելը դեռ չէր նշանակում, որ նրանք մահմեդական են։ Սակայն պետք է նշել մի կարևոր հանգամանք. այս շարժման ընթացքում քրդերը ավելի հաղորդակից դարձան իսլամի գաղափարախոսությանը և ավելի շատ նախադրյալներ ստեղծվեցին իսլամի մասսայական ընդունման համար։ Օգտվելով կենտրոնական իշխանության թուլությունից և մասնավորապես 942 թ. բուիների կողմից Բաղդադի գրավումից, քուրդ ֆեոդալները ավելի ուժեղացրին իրենց դիրքերը և հիմնադրեցին մի շարք քրդական իշխանություններ։ Իսլամի գաղափարները նրանց կողմից օգտագործվում էին իրենց տիրապետության ամրապնդման համար։ Այս հանգամանքը իր

հերթին նպաստեց մահմեդականության տարածմանը քրդերի մեջ։ Այլ կերպ ասած, իսլամը որպես ֆեոդալական գաղափարախոսություն դարձավ քրդական վերնախավի կրոնը նույնպես։ Քրդական այս կարգի իշխանություններից էր Հասանվեյհների իշխանությունը (961—1015 թթ.)։ Նրա հիմնադիրն էր քուրդ խոշոր ֆեոդալ Հասանվեյհ իբն ալ-Հուսեյն ալ-Քուրդին, որին հաջողվեց իր շուրջը համախմբել քրդական մի շարք ցեղերի և 961 թ. հիմնադրել իշխանություն, Դինավար մայրաքաղաքով։ Այստեղ նրա առաջին քայլերից մեկը մզկիթ կառուցելն էր[76]։

Հասանվեյհի մահից հետո իշխանությունն անցավ նրա որդուն՝ Բադրին (979—1015 թթ.), որն իր գործունեության ընթացքում մեծ տեղ էր տալիս մուսուլմանական գաղափարների արմատավորմանը։ Բադրի օրոք Հասանվեյհների իշխանության կազմի մեջ էին մտնում Համադանը, Դինավարը, Նեհավանդը, Ասադաբադը և այլն[77]։ Շարաֆ խան Բիթլիսին նշում է, որ նրան էին պատկանում «...բոլոր ամրոցները, լեռները, հարթավայրերը Դինավարից մինչև Ահվազ, Խուզիստան, Բորոջիրդ (լեռ Լուրիստանում—Ա. Փ.), Ասադաբադ և Նեհավանդ»[78]։

Բադրի մուսուլմանական բարեգործությունների մասին գրում են շատ հեղինակներ։ Մեջբերում ենք կատարում Իբն ալ-Ջաուզիի (XII դ.) երկից. «...Բադրը,—գրում է նա,—ամեն տարի ծախսում էր հազար դինար, որպեսզի 20 մարդ, հաջ գնային նրա մոր և Ադուդ ադ-Դաուլայի փոխարեն ...յուրաքանչյուր ուրբաթ օրը նա չքավորներին և այրիներին որպես ընծա տալիս էր 10 հազար դիրհեմ։ Յուրաքանչյուր տարի ծախսում էր երեք հազար դինար, որպեսզի (Համադանից Բաղդադ) կոշկակարները կոշիկ պատրաստեն հաջ մեկնողների համար։ Ամեն ամիս նա ծախսում էր 20 հազար դիրհեմ մեռածներին սավան գնելու համար։ Իր տարածքում Բադրը նորոգեց[79] երեք հազար մզկիթ և իջևանատներ օտարերկրացիների համար։ Յուրաքանչյուր հոսող ջրի մոտ նա գյուղ էր կառուցում։ Յուրաքանչյուր տարի Բադրը հազար դինար էր ուղարկում ալ-Հարամայնի (այսինքն՝ Մեքքայի և Մեդինայի—Ա. Փ.) բնակչության ողորմությունների, ճանապարհների պաշտպանության և այլ կարիքների համար։

...Երբ նա վախճանվեց այդ ամենին վերջ տրվեց ... ուխտագնացությունը դադարեց։ Բադրը շատ էր աղոթում և փառաբանում աստծուն... նա թաղվեց հավատացյալների վեհապետ հանգուցյալ Ալիի գերեզմանոցում»[80]։

Արաբական աղբյուրներից բերված նյութերը ցույց են տալիս, որ իսլամի տարածումը քրդերի մեջ մեծ չափեր ընդունեց X դարից։ Բացի

այդ, Իբն ալ-Ջաուզին վկայակոչում է քրդերի մոտ իսլամի շիական ուղղության գոյության մասին, թեև քուրդ պատմիչ Շարաֆ խան Բիթլիսին նշում է, որ քրդական բոլոր ցեղերը իսլամի սուննի ուղղության շաֆիական աղանդի հետևորդներ են[81]։ Այդ աղանդը ըստ Իբն ալ-Ասիրի՝ քրդական Մրվանյան իշխանությունում ընդունվեց X դարի վերջերին[82]։

Ամփոփելով մեր շարադրանքը, անհրաժեշտ է ընդգծել, որ իսլամը քրդերի մեջ սկսեց ներթափանցել VII դարի 30-ական թվականներից, երբ արաբները նվաճեցին քրդական շրջանները։ Սակայն այդ մասին մեզ հասած սկզբնաղբյուրների տվյալները նոր դաղափարախոսության ընդունման վերաբերյալ չափազանցված են։ Քրդերի մահմեդականացման բուն պրոցեսը սկսվեց, մեր կարծիքով, IX դարում։ Իսկ X դարից իսլամի ընդունումը կրեց մասսայական բնույթ, երբ քրդական ֆեոդալական վերնախավը, ելնելով իր քաղաքական և տնտեսական շահերից, ինչպես նաև իր ազդեցության ոլորտը ընդլայնելու նպատակով, ամբողջությամբ անցավ այդ կրոնի ծառայության, իր ետևից տանելով հոծ զանգվածներ։

А. П. ПОЛАДЯН

РАСПРОСТРАНЕНИЕ ИСЛАМА СРЕДИ КУРДОВ В VII—X вв.

(По арабским источникам)

Резюме

Вопрос о распространении ислама среди курдов в востоковедческой литературе изучен слабо. В статье ставится цель на основании арабских средневековых источников показать первоначальный этап процесса распространения ислама среди курдов. В связи с этим автором рассматривается ряд вопросов, связанных с домусульманскими верованиями в среде курдов.

Использованные арабоязычные материалы позволяют утверждать, что первые упоминания о распространении ислама относятся к 30-м г. VII в., однако они, по-видимому, легендарны. Более надежные сведения о начале исламизации курдов датируются IX в. Массовое обращение курдов в ислам началось лишь в X в., когда руководствуясь политическими и экономическими интересами, ислам приняла курдская феодальная верхушка.

1. *Н. Марр*, Еще о слове челеби. «Записки Восточ. Отделения Императорского Русского Археолог. Общест.», т. 20, вып. II—III, СПб., 1911; *В. Ф. Минорский*, Заметки и впечатления, СПб., 1915 г.; *С. А. Егиазаров*, Краткий этнографический очерк Эриванской губернии, Тифлис, 1891 г.; *В. Никитин*, Курды, М., 1964 г.; *V. Minorsky*, Kurdistan and kurds,;—„The Encyc. of Islam", v. 2, London, 1927, *G. Driver*, The religion of the kurds,:—„BSOS", v. 11, pt. 2, 1922, *B. Nikitin*, Une apologie kurds du sunnism,—„Rocznok Orjanlistczny", t. VIII, Lwow, 1934; *B. Nikitin*, Les kurdes et le christianisme,—„RHR", 1922, t. LXXXV, N 3.

محمد امين زكي، خلاصة تاريخ الكرد وكردستان، القاهرة، ١٩٣٩، رشيد ياسمي، كرد و پيوستگي نژادى و تاريخى او، تهران، ملا رووف سليم حويزى، كورد وئايني ئيسلام، بەغدا، ١٩٧٠.

G. Edmonds, Kurds, Turks and Arabs, New-York, 1947, E. Soan, To Mesopotamie and Kurdistan in Disquise, London, 1926,...

2. رشيد ياسمي، كرد...، ص ١١٩.

3. محمد امين زكي، خلاصة تاريخ الكرد، ص ١٢٨، رشيد ياسمي، كرد ـ ص ١١٩.

4. «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ. 3, Ե., 1977, էջ 711։

5. *V. Minorsky*, Kurdistan and kurds,—„The Encyc. of Islam", v. 2, London, 1927, p. 1151.

6. Նույն տեղում։

7. الطبرى، تاريخ الام والملوك، مصر ـ ج ٥، ص ٩ ـ ١٢، ابن الاثير الكامل في التاريخ، القاهرة، ١٩٣٧، ج ٣، ص ٢٤ـ٢٥.

8. *Ibn Haukal*, Viae et regna,—„Bibliotheca Geographorum Arabicorum", ed. M. J. de Goeje, t. 11, Lugduni Bat., 1873, p. 189, այսուհետև Ibn Haukal.

9. Նույն տեղում։

10. *Al-Istakhri*, Viae regnorum,—„Bibliotheca Geographorum Arabicorum", t. I, ed M. J. de Goeje. Lugduni Batavorum, 1870, p. 139 (այսուհետև *al-Istakhri*).

11. *Al-Moqaddasi*,—„BGA", t. III, Lugduni Batavorum, 1966, p. 427 (այսուհետև *al-Moqaddasi*).

12. *Ibn al-Fakih*. Kitab al-Boldan,—"BGA", t. V, Lugduni Batavorum, 1885.

13. *Al-Idrisi*, Opvs Geographicym, fas. IV, Neapol-Roma, 1974, p. 424 (այսուհետև *al-Idris*).

14. *Al-Moqaddasi*, p. 427.

15. *Ibn al-Fakih*, p. 246.

16. Նույն տեղում։

17. *Ibn Khordadbeh*, Kitab al-Masalik wal-mamalik,—„BGA", t. VI, Lugduni Batavorum, 1889, p. 47 (այսուհետև *Ibn Khordadbeh*) տե՛ս նաև *Ibn al-Fakih*, 203.

18. *Al-Istakhri*, p. 114, al-Idrisi, fas. IV, p. 419.

19. *Ջիբալը (արաբերեն «ջաբալ»—[սար] բառի հոգնակին է) Համադան կենտրոնով աշխարհագրական-վարչական բաժանում էր արաբական տիրապետության ժամանակաշրջանում։ Նրա կազմի մեջ մտնում էին արևմտյան Իրանի լեռնային հսկայական զանգվածներ, ընդ որում նաև պատմական Մարաստանի մի մասը։ Ջիբալը հայտնի էր նաև «Իրաք ալ-Աջամ (Իրանական Իրաք)» անունով։*
Համադանի՝ հյուսիսից մինչև Ատրպատականի սահմանակից լեռների բնակչության գերակշռող մասը քրդեր էին։ Քերմանշահի (Կարմասին) և Ատրպատականի միջև ընկած մարզը ուշ շրջանում կրեց Արդելան անունը։ Տե՛ս ***В. Бартольд***, Соч. т. VII, Т. 1971, с. 198—202, *Ibn Haukal*, p. 255.
20. *Ibn Rosteh*, Kitab al-A'iak an-Nafisa.—„BGA", t. VII, Lugduni Bat. 1892, p. 165, al-Moqaddasi, p. 394:
21. المسعودی، اخبار الزمان، القاهرة، ۱۹۳۸، ص ۷۸
22. م۰ ا۰ زکی، ص ۳۰۴–۳۰۵، ر۰ یاسمی، ص ۱۳۱۰ *V. Minorsky, նշված աշխատությունը, էջ 1151, G. Driver, նշված աշխատությունը, էջ 187։*
23. خصباك شاكر، الاكراد، بغداد، ۱۹۸۳، ص ۴۸۴۰
24. *Ibn Haukal*, p. 156; *al-Idrisi*, fas. VI, Neapol-Roma, 1976, p. 659.
25. *Al-Moqaddasi*, p. 394.
26. *Ibn Haukal*, p. 207; الاندلسي، كتاب طبقات الامم، بيروت، ۱۹۱۲، ص ۱۷
27. *Ալ-Ջուդի, լեռ է (400 մ), գտնվում է Բոհթանում, Ջազիրա իբն Օմարի հյուսիսարևելքում։ Արաբական աղբյուրներում շատ է գրվել այս լեռան մասին համաշխարհային ջրհեղեղի և Նոյի տապանի կապակցությամբ։ Նրանցում կրկնվում է Աստվածաշնչի դիցաբանական վարկածը, նշվում է, որ Նոյի տապանը կանգնել է ալ-Ջուդի լեռան կատարին։*
28. المسعودی، مروج الذهب، ج ۲، بيروت، ۱۹۶۶، ص ۲۵۱
29. *ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի արաբական ձեռագրաֆոնդի № 782 ձեռագիր, թ. 167ա։*
30. الدمشقي، كتاب نخبة الدهرفي عجائب البر والبحر، لايبتسيك، ۱۹۲۳، ص ۲۵۵
31. الشابشتي، الديارات، بغداد، ۱۹۵۱، ص ۱۹۶–۱۹۹
32. ياقوت الحموی، معجم البلدان، ج ۲ بيروت، ۱۹۵۶، ص ۵۳۰
33. *Л. И. Климович*, Ислам, М., 1962, с. 13.
34. *М. Б. Пиотровский*, Мухаммед, пророки, лжепророки, кахины, в сб. «Ислам в истории народов Востока», М., 1981 г., с. 15.
35. محمد امين زكي، خلاصة، ص ۱۳۰
36. *Նույն տեղում։*
37. *Ibn Hajar*, A Bibliographical Dictionary of Persons who Knew Mohammad, vol. I, Calcutta, 1856, p. 428.
38. ابن حجرالعسقلاني، تهذيب التهذيب، حيدراباد ج ۱۰، ص ۳۹۴
39. ابن الاثير، اسد الغابة فی معرفة الصحابة ج ۱، تهران، ۱۳۷۷، ص ۲۵۱
40. ابن حجر، الاصابة، ص ۴۲۸، ابن الاثير، اسد الغابة، ج ۱، ص ۲۵۱
41. محمد امين زكي، خلاصة، ص ۱۳۰
42. رفيق حلمي، الاكراد، بغداد، ص ۱۷

43. *И. Петрушевский*, Ислам в Иране в VII—XV вв.. Л., 1966. с. 19.
44. البلاذری، فتوح البلدان، القاهرة، ۱۹۰۱، ص ۱۸۲
45. Նույն տեղում, էջ 309։
46. Նույն տեղում, էջ 339։
47. Նույն տեղում, էջ 341։
48. ابن خلدون، کتاب العبر و دیوان المبتدا والخبر، ج ۳، مصر، ۱۲۸۴، ص ۱۱۹
49. یاقوت الحموی، معجم البلدان، ج ۳، بیروت، ۱۹۵۵، ص ۳۷۴
50. Вторая записка Абу Дулафа, М., 1960, с. 41—42.
51. الطبری، تاریخ الامم و الملوك، ج ۴، مصر، ص ۲۱۰—۲۱۱، ابن الاثیر، الکامل، ج ۳، القاهرة، ۱۹۳۵، ص ۳۸۱—۳۸۲.
52. ابن الاثیر، الکامل، ج ۳، ص ۲۴—۲۵، الطبری، تاریخ الامم والملوك، ج ۵، مصر، ص ۸—۱۲
53. ابن الاثیر، ج ۳، ص ۲۴—۲۵
54. *Ibn al-Fakih*, p. 293 ، البلاذری، ص ۲۱۱، ابن الاثیر، الکامل، ج ۳ ص ۴۴
55. البلاذری، ص ۲۱۱
56. *Т. М. Сипенкова*, О налоговой терминологии ал-Баладзори.—«Палестинский сборник», вып. 15/78/, М., 1966, с. 148.
57. البلاذری، ص ۴۵۱—۴۵۲
58. ***Said b. Batrik***, at-Tarikh,—„Scritores Arabici textus", ser. III, т. VII, Parisis, 1909, p. 10.
59. الطبری، تاریخ، ج ۶، مصر، ص ۷۱—۷۲، ۱۱۵—۱۱۶
60. *Al-Istakhri*, pp. 113, 156—157.
61. *Ibn Khordadbeh*, pp. 14—15; *Al-Moqaddasi*, p. 400, *Ibn al-Fakih*, pp. 131—136.
62. مروة حسین، النزاعات المادیة فی الفلسفة العربیة الاسلامیة، ج ۱، بیروت، ۱۹۷۹، ص ۴۳۶
63. *И. Петрушевский*, Ислам в Иране..., с. 39.
64. مروة حسین، النزاعات، ج ۱، ص ۴۳۷
65. *И. Петрушевский*, Ислам в Иране..., с. 43.
66. مروة حسین، النزاعات، ج ۱، ص ۴۴۱
67. Նույն տեղում։
68. الیعقوبی، تاریخ، ج ۲، النجف، ۱۹۳۹، ص ۱۹۳
69. المسعودی، مروج الذهب، ج ۳، ص ۳۰۲—
70. الطبری، تاریخ، ج ۱۱، مصر، ص ۲۳۲، ابن الاثیر، الکامل، ج ۵ ص ۳۳۴
71. المسعودی، مروج الذهب، ج ۳ ص ۳۵۱
72. المسعودی، مروج الذهب، ج ۳، ص ۳۰۲
73. ابن خلدون، کتاب العبر، ج ۳ مصر، ۱۲۸۴، ص ۴۱۳—۴۱۴
74. *И. Петрушевский*, Ислам в Иране..., с. 48.
75. *Е. Беляев*, Мусульманское сектантство, М., 1957, с. 35.
76. ابن الاثیر، الکامل، ج ۷، ص ۱۰۱

77. ابن الجوزى، المنتظم في التاريخ، ج ٧، حيدرآباد، ١٣٥٧، ص ٣٧١

78. *Шараф-Хан Бидлиси*, Шараф-наме, т. I, М., 1967, с. 91.

79. *Իբն Կասիրը նշում է, որ «Բաղդը կառուցեց ավելի քան 2 հազար մզկիթ և իշխանական տներ»*, տե՛ս ابن كثير، البداية والنهاية فى التاريخ، ج ١١، القاهرة، ١٩٣٢، ص ٣٥٤.

80. ابن الجوزى، المنتظم، ج ٧، حيدرآباد، ١٩٥٧، ص ٣٧١

81. *Шараф-Хан Бидлиси*, Шараф-наме..., с. 91.

82. ابن الاثير، الكامل، ج ٧، القاهرة، ص ١٤٤